

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂՃՈՂԿՈՄԱՏ—ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ  
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ



631  
7-25



1935

ՅԵՐԵՎԱՆ



15270

09 SEP 2013

631

այ.

2-25

4 AUG 2010

ՀՐԱՀԱՆԳ**ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ**

Հանրային և տեղական պարարտանյութերի ձեռքի և փանձնավոր ոգտագործումը, ինչպես ցույց են տվել գիտահետազոտական հիմնարկների աշխատանքները և մասսայական փորձերը, բերքատվությունը բարձրացնում է 20—30 տոկոսով, յերբեմն նույնիսկ ավելին: Ավելի ցայտուն է լինում բերքի բարձրացումը, յերբ կանոնավոր կերպով կիրառվում է ազրոտեխնիկայի ձեռք կոմպլեքսը (ցանժաշրջանատվություն, վուռոգում, պայքար մոլախոտերի և հիվանդությունների դեմ, մեքենայացում և այլն):

Պարարտանյութերից բարձր արդյունք ստանալու համար, անհրաժեշտ է կիրառել հետևյալ ձեռնարկումները:

**I. ՀԱՆԳԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ****1. Հանգային պարարտանյութերի պահպանումը**

Ազրոտային պարարտանյութերից շատերը հեշտությամբ լուծվում են ջրում: Անձրևի կամ ձյունի տակ ընկնելով պարարտանյութերի աննդանյութերը լուծվում—անցնում են հողի մեջ: Նույնը կատարվում է նաև ֆոսֆորային (սուպերֆոսֆատի) պարարտանյութերի հետ:

Անխնամ, բացթյա մնացած պարարտանյութերն անձրևի և ձյունի ազդեցության տակ կորցնում են իրենց աննդանյութերի վորոշ մասը, վորով չի ստացվում այն ոգուտը, ինչ վոր սպասվում է: Դրա համար ել կոլտնտեսությունները պետք է կատարեն հետևյալ աշխատանքները.

ա) պարարտանյութերը մինչև դաշտ փոխադրելը պահել կոլտնտեսության պատկանող համապատասխան շենքում, վորի հատակը պետք է լինի տախտակած, կամ

1008  
1846  
34814



սալահատակած, կտուրը—սվաղած՝ պարարտանյութերը խոնավությունից ղերծ պահելու համար.

բ) տարբեր տեսակի պարարտանյութերը պահեստում պետք է իրարից անջատ պահել, դրա համար էլ անհրաժեշտ է կառուցել հատուկ միջնադասեր.

գ) պարարտանյութի պահեստում չի թույլատրվում ուրիշ նյութեր (նավթ, բենզին և այլն) պահել.

դ) ամփակային սեղանային պետք է դնել պահեստում պատվանդանների վրա (գերանների վրա) և վոչ թե անմիջապես հատակին:

## 2. Պարարտանյութերի սեղանային սեղան

Պարարտանյութը յերկաթուղու կայանից, Մեքենատրակտորային կայանի պահեստից կոլտնտեսություն, ինչպես և կոլտնտեսությունից դաշտ տեղափոխելիս անհրաժեշտ է կատարել հետևյալը.

ա) նախապես կարգի բերել բոլոր փոխադրական միջոցները, փակել սայլերի և ֆուրգոնների վրա յեղած ճեղքերը, փոքրագույն պարարտանյութը տեղափոխելու ժամանակ չթափվի ու չփչանա.

բ) տեղափոխման ժամանակ սպասարկողները կոլտնտեսությունում յեղած արկղները, տակառները, տաշտերը, և այլն.

գ) պարարտանյութը փոխադրելու ժամանակ անձրեվից կամ ձյունից պաշտպանելու համար անհրաժեշտ է, փոր ամեն մի սայլ կամ ֆուրգոն ունենա բրնձենա, փալա և այլն՝ սայլը ծածկելու համար, Բացի այդ, ամեն մի սայլապան պիտի ունենա իր հետ բահ՝ պարարտանյութ լցնելու և թափելու համար.

դ) թյուրիմացությունից խուսափելու համար, կոլտնտեսությունները պարարտանյութն ստանալու ժամանակ Մեքենատրակտորային կայանից կամ հողբաժնից ամեն

տեղում պետք է ստանան վավերացումը, փորի վրա նշանակված լինի ստացվելիք պարարտանյութերի անունը, քանակը և նրա մեջ գտնված ազոտի կամ ֆոսֆորի տոկոսը:

ե) յերկաթուղու կայանից, կամ ՄՏԿ-ի պահեստից ստացվող պարարտանյութը պետք է կշռված ընդունել և վոչ թե աչքի չափով.

զ) կոլտնտեսությունից պահեստներում պարարտանյութերը պետք է դասավորել ըստ տեսակների:

## 3. Հողամասի ընկալունք

Պետք է պարարտացնել այն հողամասերը, փորոնք

ա) նախորդ տարում չեն պարարտացվել.

բ) մոլախոտերով ուժեղ վարակված չեն.

գ) բույսի աճեցողության (վեգետացիայի) ամբողջ շրջանում ապահովված են ջրով:

Չպետք է պարարտացնել.

ա) առվույտի տակ գտնված հողամասերը.

բ) նոր վարված չիմանները.

գ) ճահճացած և աղուտ հողերը:

Մանրություն.— Առվույտի հողամասերը կարելի չէ պարարտացնել միայն ֆոսֆորային պարարտանյութերով:

## 4. Պարարտացման նորմաներ

Պարարտացման նորմայի անհրաժեշտ քանակը փորձվում է հողի բնութագրով, նրա կուլտուրականությունով, ստորերկրյա ջրերի բարձրությամբ և այլ պայմաններով:

Սրանից յեղնելով՝ անհրաժեշտ է.

ա) 1935 թ. ըստ ջրջանների և գյուղերի բամբակի դաշտերը պարարտացնել ստորև մատնանշված աղյուսակի համաձայն.



[illegible]

Վեպեի շրջան	Աղոտ 90 կգ, Յոսֆոր՝ 60 կիլոգրամ	Աղոտ 90 կգ, Յոսֆոր՝ 45 կիլոգրամ	Աղոտ 60 կգ, Յոսֆոր՝ 60 կիլոգրամ	Աղոտ 60 կգ, Յոսֆոր՝ 45 կիլոգրամ	Յոսֆոր 60 կիլոգրամ
	Գյուղի անունը Պարարտացման տարած.	Գյուղի անունը Պարարտացման տարած.	Գյուղի անունը Պարարտացման տարած.	Գյուղի անունը Պարարտացման տարած.	Գյուղի անունը Պարարտացման տարած.
	Վեպեի շրջանի բո- լոր գյուղերում 850 հեկտար տա- րածությամբ վրա				
Ընդա- մենը	850	625	3250	535	130

գ) շաքարի ճակնդեղի մեկ հեկտարին՝ 28 կգ ֆոսֆոր ( $P_2O_5$ ) և 10 կգ ազոտ՝ ցանքը համակցված (կոմբինացված) շաքարացանով կատարելու դեպքում: Սովորաբար շաքարի ճակնդեղի մեկ հեկտարին արվում է 35—42 կգ ֆոսֆոր ( $P_2O_5$ ).

դ) ձխախոտի մեկ հեկտարին առաջ, վարից առաջ,  
36—42 կգ ֆոսֆոր ( $P_2O_5$ ), և ապա՝ 26—30 կգ:

Մանգրուքյուն—Շաքարի ճակնդեղի և ծխախոտի չափը  
1935 թ. համար հախատեալած և ըստ ստացված  
պաշարի:

Պարարտանյութերի նորմաները սահմանվում են ըստ նրանց մեջ յեղած սննդանյութի (ազոտ, ֆոսֆոր) քանակի. այսպես, որինակ, յեթե վորոշված է, վոր պետք է ավյալ դաշտը պարարտացնել 60 կգ ազոտով, ապա այդ դեպքում, նայած թե ինչ տեսակի է քանի տոկոսանոց պարարտանյութ ունենք, ըստ այնմ էլ վորոշում ենք մեկ հեկտարին տրվելիք պարարտանյութի քանակը: Որինակ՝



յեթե ունենք ամոնիում-սուլֆատ, Վորի ազոտի տոկոսը հավասար է 20-ի, ապա հողին 60 կգ մաքուր ազոտ տալու համար անհրաժեշտ է այդպիսի պարարտանյութից վերցնել 300 կգ, փորվենտե ամոնիում-սուլֆատի ամեն մի 100 կգ պարունակում է 20 կգ մաքուր ազոտ, հետևաբար 300-ը կպարունակի 60 կգ մաքուր ազոտ:

Իսկ յեթե անտեսությունն ունի վոշ թե ամոնիում-սուլֆատ, այլ, յենթադրենք՝ լեյնա-սելիտրա, Վոր պարունակում է 26 տոկոս մաքուր ազոտ, ապա նույնպես մեկ հեկտարին 60 կգ մաքուր ազոտ տալու համար անհրաժեշտ է վերցնել վոշ թե 300 կգ, այլ 230 կգ: Այդ հաշիվը կատարվում է հետևյալ կերպ. յեթե 100 կգ լեյնա-սելիտրան պարունակում է 26 կգ ազոտ (այսինքն՝ 26 տոկոս), ապա քանի կիլոգրամ պետք է վերցնել այդ պարարտանյութերից, փորպեսզի նրա մեջ լինի 60 կգ մաքուր ազոտ:

Հաշվում են այսպես.

100-ի մեջ կա 26 կգ ազոտ.

քանի X (իբս) կգ-ի մեջ կլինի 60 կգ մաքուր ազոտ: Պահանջվող պարարտանյութերի քանակը կլինի՝

$$X = \frac{60 \times 100}{26} = \frac{6000}{26} = 230,77:$$

Ուրեմն, 230,77 կգ լեյնա-սելիտրան ունի 60 կգ մաքուր ազոտ: Այս դեպքում կկորացնելով 230,77 կիլոգրամը, կարող ենք վերցնել 230 կգ լեյնա-սելիտրան:

Ստորե բերված աղյուսակը ցույց է տալիս, թե այս կամ այն քանակությամբ պարարտանյութն ըստ տեսակների ինչ չափով պետք է խառնել մեկ հեկտար հողի մեջ 1935 թ. համար ընդունված հետևյալ չափով.

Աղյուսակ № 2

Չափը	Քանի կգ պարարտանյութի յե հավասար				ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Քանի կգ է	Ամոն-սուլֆատ 20%	Լեյնա-սելիտրա 26%	Ամոնիակային-սելիտրա 35%	Սուպերֆոսֆատ 14%	
90	450	346	257	—	Վերցված է կլոր թվերով
75	—	—	—	535	
60	300	230	171	428	
45	—	—	—	331	
42	—	—	—	300	
36	—	—	—	257	
30	150	115	85	—	
28	—	—	—	200	
26	130	100	74	—	
10	50	38	28	—	

### 5. Պարարտանյութի ժամկետը

Հանքային պարարտանյութերը հողի մեջ մտնում են զանազան ժամկետներով, այն է՝ ցրտահերկի, դարնանավարի, բամբակի կոկոնակալման շրջանում, իսկ շաքարի ճակնդեղինը՝ ցանքի հետ միաժամանակ:

Բերքի բարձրացման տեսակետից նպատակահարմար է պարարտանյութն աշնան վարից առաջ մտնել: Աշնանը թույլատրվում է պարարտացնել սուպերֆոսֆատի և ամոնիում-սուլֆատի խառնուրդով կամ միայն սուպերֆոսֆատով: Այն դեպքում, յերբ պարարտանյութը բամբակի համար հողին են խառնում կոկոնակալման ժամանակ, անհրաժեշտ է պարարտացումից հետո բամբակը ջրել 2—3 անգամից վոշ պակաս:

Ցեթե շաքարի ճակնդեղի հողամասերը ցրտահերկի կամ դարնանավարի ժամանակ չեն ստացել պարարտա-



նյութ, վերջինը մտցնում են ցանքի հետ միասին՝ համա-  
կցված շարքացանի միջոցով:

# 6. Ինչպես պահպանել պարարտանյութերի խառնուրդը

Պարարտանյութերը նախ քան հողին խառնելը պետք է  
լավ մանրացնել, տարբեր տեսակ պարարտանյութերն իրար  
խառնել և, վորպես խառնուրդ, տալ հողին: Խառնուրդ  
են պատրաստում հետևյալ նպատակով.

ա) խառնուրդի շնորհիվ պարարտանյութերի առան-  
ձին տեսակները միահավասար են շաղ տրվում հողի յե-  
րեսը:

բ) պատրաստված խառնուրդը հնարավորություն է  
տալիս միանգամից յերկու տարբեր պարարտանյութ շաղ  
տալ: Միաժամանակ, մանրացման շնորհիվ, լավանում է  
պարարտանյութի ֆիզիկական դրությունը:

Ամոնիում-սուլֆատը սուպերֆոսֆատի հետ կարելի  
յե խառնել հող մտցնելուց մի քանի ուր առաջ, իսկ  
ամիակային-սելիտրան և լեյնա-սելիտրան սուպերֆոսֆա-  
տի հետ պետք է խառնել հող մտցնելուց անմիջապես  
առաջ ու իսկույն շաղ տալ և նույնիսկ մի ուր անգամ չթող-  
նել խառնած վիճակում:

Պարարտանյութերի խառնուրդը պատրաստվում է  
կոլտնտեսության պահեստում՝ բրիգադիւրների կողմից. նախ  
քան պարարտանյութը խառնուրդ դարձնելն անհրաժեշտ  
է բոլոր տեսակի աղերը մանրացնել-փոշիացնել: Պարար-  
տանյութը կոշտ ձևով գործածելիս հողամասն անհավասա-  
րաչափ է պարարտացվում. մի տեղ պարարտանյութ շատ  
է ընկնում, իսկ մի տեղ տեղ՝ քիչ: Կոշտ պարարտա-  
նյութը մեքենայով ցրելիս փակում է վերջինիս անց-  
քերը, վորի հետևանքով, չնայած մեքենան առաջ է շարժ-

վում, պարարտանյութը չի թափվում և ստացվում են  
չպարարտացված, խամ տեղեր:

Պարարտանյութերը մանրացնում են մեքենաներով,  
իսկ այդպիսին չունենալու դեպքում՝ փայտե թակերով: Ման-  
րացնելուց հետո պարարտանյութը մալում են 3—4 սմ  
ծակոտիներ ունեցող հողե մաղերով: Այն, ինչ վոր ան-  
ցել է հողե մաղով, արդեն կարելի յե գործածել, իսկ  
ինչ վոր չի անցել, նորից պետք է մաղել ու մանրացնել:

Պարարտանյութի խառնուրդը կատարվում է հետևյալ  
կերպ՝ բրիգադիւրն ստանում է կոլտնտեսության պահես-  
տից նախորոք մանրացված՝ իրեն հասանելի պարարտա-  
նյութերը, բահով մի քանի անգամ խառնում է՝ մինչև  
վոր ստացվի հավասար խառնուրդ:

Բրիգադիւրը պարարտանյութերը պետք է ստանա ան-  
պայման կշռված՝ յեղնելով տվյալ բրիգադին տրված պա-  
րարտացվելիք հողամասից և կիրառվելիք չափից: Վոչ մի  
դեպքում աչքի չափով չպետք է դեկավարվել: Պարարտա-  
նյութի խառնուրդ կատարելիս բրիգադիւրը պետք է առաջ-  
նորդվի № 2 աղյուսակով: Որինակ՝ յեթե բրիգադը պա-  
րարտացնելու լինի 25 հեկ. բամբակ, մեկ հեկտարին պետք  
է տա 60 կգ ազոտ և 60 կգ ֆոսֆոր: Մեր № 2 աղյու-  
սակից յերևում է, վոր 60 կգ ազոտը հավասար է 300 կգ  
ամոնիում-սուլֆատի, և 60 կգ ֆոսֆորը՝ 428 կգ սու-  
պերֆոսֆատի: Բազմապատկելով այդ թվերը 25 հեկտարի  
վրա՝ կստացվի այն, վոր ամոնիում-սուլֆատ պահանջվում  
է 7,5 տոնն, սուպերֆոսֆատ՝ 10,7 տոնն: Այդպիսով այս  
բրիգադիւրն իր խառնուրդը պատրաստում է 7,5 տոնն  
ամոնիում-սուլֆատից և 10,7 տոնն սուպերֆոսֆատից:  
Տարբեր տեսակի հանքային պարարտանյութերից խառ-  
նուրդը նույն ձևով է կազմվում:



# 7. Պարարտանյութը հողի մեջ մտցնելու տեխնիկան

Պարարտանյութը հողին տրվում է մեքենայով կամ ձեռքով:

Մեքենայով ցրելու դեպքում մեքենան նախորոգ պետք է կարգի բերել և տյնպես դասավորել, վոր նա շաղ տա ձիշտ անքան պարարտանյութ, ինչքան վոր նախատեսված է մեկ հեկտարի համար: Դրա համար շարքացանը դաշտ տանելուց առաջ ստուգում են:

Ստուգումը կատարվում է հետևյալ ձևով. շարքացանի ցանոդ անվի տակ դնում են հենարան, այնպես վոր անիվն ազատ կարողանա պտտվել, իսկ մեքենայի տակ փռում են շոր և մեքենայի մեջ լցնում պարարտանյութի խառնուրդը, վորից հետո սկսում են պտտել անիվը և շորի վրա թափված պարարտանյութը կշռում:

Այն կետում, վորտեղից սկսվում է անվի պտույտը, անվի շրջանակի վրա վորեք նշան է արվում (գունավոր շորի կտոր է կապվում) պտույտների քանակը հաշվի առնելու համար:

Մեկ պտույտ հաշվվում է այն, յերբ անիվը մի լրիվ շրջան է կատարում:

Ներքոհիշյալ աղյուսակը (№ 3) ցույց է տալիս, թե այս կամ այն քանակությամբ պարարտանյութ շաղ տալու համար, տարբեր պարարտանյութերի խառնուրդից (վոր լցված է մեքենայի մեջ) ինչքան պետք է թափվի նրա տակ փռած շորի վրա 20 պտույտ կատարելու դեպքում: Յեթե պահանջված քանակից քիչ է թափվում, շարքացանի անցքերը նորից պիտի լայնացնել և նորից պտտեցնել անիվը: Այս ձևով կարգավորել շարքացանը, մինչև վոր նա ցանի պահանջված քանակի պարարտանյութ: Պետք է հաշվառել կատարել, յերբ շարքացանը պահանջված նորմայից ավելի յե ցանում: Ստուգումը պետք է կատարել յերկու անգամ:

## Տախտակ № 3

Չափը կգ	Սպառ	Դանի կգ պարարտանյութ պիտի թափի մեքենայի տակ 20 պտույտից					
		Ամոնիում սուլֆատ և սուպերֆոսֆատ		Լեյնա-սելիտրա և սուպերֆոսֆատ		Ամիակային սելիտրա և սուպերֆոսֆատ	
		Տրվում է մեկ հեկտ. կգ	Պլտի թափվի 20 պտույտից	Տրվում է մեկ հեկտ. կգ	Պլտի թափվի 20 պտույտից	Տրվում է մեկ հեկտ. կգ	Պլտի թափվի 20 պտույտից
90/60		378	16,68	774	14,65	685	13,01
90/45		771	14,64	667	12,67	578	10,98
60/60		728	13,83	658	12,50	599	11,38
60/45		621	11,79	551	10,46	492	9,34

Այն դեպքում, յերբ տրակտորային պարարտանյութ ցրող մեքենաները կիսված են, նորմաները պետք է պահանջնել կիսի չափով:

Ձեռքով շաղ տալու դեպքում պետք է ամեն միջոց ձեռք առնել, վորպեսզի հանքային պարարտանյութը շաղ տրվի հողի յերեսը, վորովհետև շատ հաճախ նկատելի յե լինում, վոր պարարտանյութը մի տեղ շատ է ընկնում, իսկ մյուս տեղերը մնում են առանց պարարտանյութի: Այդ բանը կանխելու համար անհրաժեշտ է դաշտը նախորոգ բաժանել հողակտորների (վանդակների) 1000 ք. մ. մեծությամբ, սահմանները նշանակելով ցցի սուր ծայրով: Իսկ ավելի մեծ մասսիվներ ունենալու դեպքում գծել բուգիցով կամ կուլտիվատորով:

Այս դեպքում, քանի վոր վորոշ է մեկ հեկտարին տրվելիք պարարտանյութի նորման, ըստ այնմ ել վորոշում են, թե 1000 ք.մ. վորքան պարարտանյութ պետք է շաղալ (ազոտային և ֆոսֆորային): Յեթե մեկ հեկտար հողին նախատեսված է տալ 300 կգ ամոնիում-սուլֆատ, և 421 կգ սուպերֆոսֆատ, այսինքն՝ 728 կգ խառնուրդ, ապա 1000 ք. մ.-ին ընկնում է 72,8 կգ պարարտանյութ: Վորպեսզի դաշտում ամեն անգամ 72,8 կգ պարարտ



նյութ կշռվելու կարիք չզգացվի, նախորդ պատրաստել հատուկ չափս այդ ամբողջությամբ և դրանով չափել յուրաքանչյուր հողակտորին տրվելիք պարարտանյութը: Դաշտը կարելի չէ բաժանել նաև կրկնակի մեծությամբ հողակտորների:

Նկատի ունենալով այն, վոր այդ աշխատանքը պահանջում է հմտություն, ուստի անհրաժեշտ է պարարտանյութերի ցրման աշխատանքները հանձնել հմուտ կուտակողներին, վորոնք նախորդ վարժվել են պարարտանյութ շաղ տալու գործում, վորձեր են կատարել ավագով կամ հողով:

գ) կոկոնակալման ժամանակ պարարտանյութն ակոսների մեջ հավասար չափով շաղ տալու համար անհրաժեշտ է պարզել մեկ հեկտարի վրա յեղած ակոսների թիվը: Տրվելիք պարարտանյութը պետք է հավասար կերպով բաժանել ստացված ակոսների թվի վրա և դուրս բերել մեկ ակոսին տրվելիք անհրաժեշտ պարարտանյութի բաժանակը:

### Ինչպես ծածկել պարարտանյութը

Շաբբացանով կամ ձեռքով շաղ տված պարարտանյութն անհրաժեշտ է անմիջապես վարել գութանով 18—20 սմ խորությամբ:

Կոկոնակալման ժամանակ պարարտանյութը մտցվում է հետևյալ կերպ. կուլտիվատորով կամ ըռելիքով միջնաքային տարածության մեջտեղում պիտի հանել 10—12 սմ խորությամբ ակոս, շաղ տալ նախատեսված քանակի հանքային խառնուրդը, վորից հետո կուլտիվատորի միջոցով անմիջապես ծածկել և առանց ուշացնելու ջրել:

Կոկոնակալման ժամանակ պարարտացված դաշտն անհրաժեշտ է ջրել 2 անգամից վոչ պակաս

## II. ԳՈՄԱՂԸ

Գոմաղը վորպես պարարտանյութ հսկայական նշանակություն ունի գյուղատնտեսության մեջ, վորովհետև նա հանդիսանում է «լրիվ» պարարտանյութ, այսինքն իր մեջ պարունակում է այն բոլոր տեսակի պարարտանյութերը, վորոնք անհրաժեշտ են բույսի զարգացման համար:

Մյուս կողմից՝ նա լավացնում է հողի ֆիզիկական դրությունը—ծանր կավային հողերը դարձնում է փուխր, պարարտ, խոնավունակ: Ավագային հողերը գոմաղըով պարարտացնելիս դառնում են ավելի կապակցված և բերրի: Գոմաղըով պարարտացումն ազդում է վոչ թե մեկ, այլ 3—4 տարի: Գոմաղըով պարարտացնելուց հետո լավ բերք ստանալու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները:

### 1. Գոմաղի պահելը

Մեր պայմաններում գոմաղը պահում են սովորաբար գոմին կից յեղած բակում և, բացառիկ դեպքերում՝ աղբամբարներում: Թե մեկ և թե մյուս դեպքում գոմաղը պահելու և խնամելու համար անհրաժեշտ է.

ա) գոմաղը պահել այնպես, վոր որգանական նյութերը, նամանավանդ ազոտը, չկորչեն:

բ) ամբողջ գոմաղը միատեսակ խառնված լինի:

գ) ստեղծել այնպիսի պայմաններ, վոր նորմալ կերպով քայքայվեն ինչպես գոմաղի պինդ մասերը, այնպես և նրա մեջ գտնվող մուլխոտերի սերմերը:

դ. միջոցներ ձեռք առնել, վորպեսզի գուր տեղը չըկորչի մեղը և գոմաղի հեղուկային մասը:

Այս հիմնական խնդիրները կատարելու համար անհրաժեշտ է դուրս բերած թարմ գոմաղն իսկույն կույտ կազմել և պնդացնել: Նման ձևով պահված գոմաղի կույտի մեջ ողի թթվածնի պակասության հետևանքով գոմաղը



բը չի տաքանում, հետևաբար որգանական նյութերի և ազոտի կորուստն ավելի քիչ է լինում, քան յեթե գոմաղբը չպնդացվեր:

## 2. Գոմաղբը դառն փոխադրելը

Գոմաղբը դաշտ փոխադրելիս պետք է հետևել, վոր նա ամեն անգամ միևնույն թաղադրությունն ունենա, քանի վոր գոմաղբի կույտի տարբեր շերտերն իրարից տարբերվում են թե իրենց կազմությամբ և թե քայքայվելու աստիճանով: Դրա համար ել անհրաժեշտ է գոմաղբը տեղափոխելիս կույտից վերցնել վոչ թե հորիզոնական շերտով, այլ պետք է գոմաղբը կտրել ուղահայաց շերտերով՝ վերևից ներքև:

Դաշտում խայտաբղետություն չստեղծելու համար անհրաժեշտ է շաղ տալ հավասարապես, վորի համար դաշտը նախապես բաժանել հավասար հողակտորների և յուրաքանչյուր հողակտորում մտցնել հավասար քանակի գոմաղբ: Յենթադրենք, թե դաշտն ուղում ենք պարարտացնել գոմաղբով, մեկ հեկտարին 25 տոննի հաշվով, վորը հավասար է 50 սայլի: Նախորոք պետք է հաշվել, թե մեկ սայլ աղբը քանի քառակուսի մետրի վրա պետք է շաղ տալ, յեթե հեկտարին տալիս ենք 50 սայլ Դրա համար 1 հեկտ., վոր հավասար է 10000 ք. մ., բաժանում ենք 60-ի վրա, վորով պարզվում է մեկ սայլի (0,5 տոնն) պարարտացվելիք տարածությունը, այն է 10000 քմ : 50 = 200 ք. մ.: Այսպիսով դաշտը բաժանում ենք հողակտորների 200 ք. մ. մեծությամբ ( $14 \times 14$  մետր կողմերով): Գոմաղբը դաշտ տեղափոխելիս պետք է յուրաքանչյուր հողակտորի կենտրոնում լցնել մեկ սայլ գոմաղբ և ապա հավասար ջրել այդ հողակտորի վրա: Պետք է հետևել, վոր սայլն աշխատեցնելիս առանձին հողակտորներ

իրարից բաժանող ափսոսները չքանդվեն և սահմանները չկորչեն:

Յեղնելով տնտեսական պայմաններից, մեր պայմաններում, գոմաղբը դաշտ պետք է փոխադրել ձմեռը և վաղ գարնան ամիսներին: Գոմաղբը դաշտ է տարվում կամ աղբամբարից (յեթե կա այդպիսին), կամ անմիջապես գոմին կից բակի կույտերից:

Վաղ գարնանը, մանավանդ ձմրան ամիսներին, դաշտ փոխադրված գոմաղբը չպետք է լցնել փոքրիկ կույտերով, վորովհետև գոմաղբը սառչելիս չորանում է և մեծ չափով կորցնում է ամիակային ազոտը: Դրա համար անհրաժեշտ է ձմրան ամիսներին դաշտ փոխադրած գոմաղբը լցնել մեծ և յերկար կույտերով: Կույտերը պետք է ունենան մեկ մետրից վոչ պակաս հաստություն և մեկ մետր բարձրություն, վորն անհրաժեշտ է խնամքով պնդացնել: Վաղից առաջ գոմաղբը յեղանով կամ բահով լաց են անում և հավասարապես շաղ տալիս դաշտում:

1000  
353  
34845





## ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ

Պարարտանյութերի անվանումները	Պարարտանյութերի մեջ գտնվող ոգտակար մասերը տոկոսը (ազոտ, ֆոսֆոր և կալիում)	Արտաքին նշանները
1. Սուպերֆոսֆատ	14 <sup>0</sup> / <sub>0</sub> ֆոսֆոր	Բաց-մոխրագույն, կամ դեղնավուն: Թթվությամբ չափազանց խոնավ, ձևերի մեջ սեղմելուց դուռնի և դառնում
2. Սուպերֆոսֆատ	18 <sup>0</sup> / <sub>0</sub> ֆոսֆոր	Սպիտակավուն գույնի, թթվությամբ չափազանց խոնավ, ձևերի մեջ սեղմելուց դուռնի և դառնում
3. Ամոնիում սուլֆատ	20—21 <sup>0</sup> / <sub>0</sub> ազոտ	Մանր, սպիտակ, չոր փոշի
4. Ամիակային սելիտրա	33—35 <sup>0</sup> / <sub>0</sub> ազոտ	Նմանում է սեղանի աղի, շոշափելիս գլխավորում է խոնավություն
5—6. Լեյնա և Մեան սելիտրա	25—26 <sup>0</sup> / <sub>0</sub> ազոտ	Նման է սեղանի աղի
7. Սիլիկատ	12—18 <sup>0</sup> / <sub>0</sub> կալիում	Չարդադույն կամ կարմիր-շագանակագույն, տարբեր յերանդավորումներով (գույներով)
8. Նալիումի աղ	40 <sup>0</sup> / <sub>0</sub> կալիում	» » »
9. Ցիանամիդ-կալցիում	17—20 <sup>0</sup> / <sub>0</sub> ազոտ	Համարյա սևագույն, շատ մանր փոշի

## ՀԱՆԱԶԵԼՈՒ ՏԱԽՏԱԿ

Պարարտանյութերի լուծվելու ընդունակությունը ջրի մեջ	Փորձերի բնորոշիչ հատկությունները
Մասամբ լուծվում է ջրի մեջ	Ցերը կալիումը լցվում է սուպերֆոսֆատի ջրի լուծույթի վրա, առաջանում է ածխաթթու և թշուրմ է:
Մասամբ լուծվում է ջրի մեջ	Ցերը կալիումը լցվում է սուպերֆոսֆատի ջրի լուծույթի վրա, առաջանում է ածխաթթու և թշուրմ է:
Ջրի մեջ լիովին լուծվում է	Ցերը մոխրի լուծույթը լցնում են ամոնիում սուլֆատի լուծույթի վրա, առաջանում է ճաշատեղիի սպիտակ հոտ: Շիկացած ածխի վրա ամոնիում սուլֆատը թափելուց առաջանում է սպիտակ ծուխ:
Ջրի մեջ լիովին լուծվում է	Նույն փորձերը, ինչ վոր ամոնիում սուլֆատի նկատմամբ, միայն թե շիկացած ածխի վրա թափելիս սպիտակ ծուխ չի առաջանում, այլ առաջանում է բոռնիում: Ցերը ամիակային սելիտրան լուծում են ջրի մեջ, նրա լուծույթի ջերմաստիճանն ուժեղ կերպով բնկնում է (մինչև 50 ցելսիուս): Շիկացած ածխի վրա ամիակային սելիտրան ամբողջովին այրվում է:
Ջրի մեջ լիովին լուծվում է	Նույն փորձերը, ինչ վոր ամիակային սելիտրայի նկատմամբ, սակայն շիկացած ածխի վրա միմիայն բոռնիում է, բայց լրիվ չի այրվում:
Ջրի մեջ համարյա լիովին լուծվում է	Շիկացած ածխի վրա ճաքճքում է, բայց չի այրվում:
» » »	» » »
Ջրում չի լուծվում	Հեղուկությամբ ճանաչվում է իր գույնով (համարյա սև գույն ունի):









Հանքան, Ար. Գրիգորյան

Սրբազրի՛ Գար. Հակոբյան

Գլավիտի լիազոր № Գ-75

Հրատ. № 197

պատվեր № 178

տիրաժ 1000

Հանձնվել է արտադրության 1935 թ. մարտի 15-ին

Ստորագրված է տպագրելու 1935 թ. մարտի 23-ին

Գրուգրաաբի տպարան, Յերեան, Նալբանդյան 50.

ՀՀ Ազգային գրադարան



NL0282090



# ИНСТРУКЦИЯ

По применению минеральных удобрений